«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԵՆԹԱԹԵՄԱ՝ Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ԱՌԱՐԿԱՆ՝ ԴԱՍՎԱՐ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՂԱՎՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

ԳԼՈՒԽ 1. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 4

1.1 Ընթերցողական կարողության ձևավորման տեսական մոտեցումները 4

1.2Կարդալու որակական հատկանիշներն ու դրանց դերը ընթերցողական կարողության ձևավորման հարցում.....8

1.3Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման առանձնահատկությունները..... 16

ԳԼՈՒԽ 2. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ 28

2.1 <<Հայոց լեզու, գրականություն>> կրթական չափորոշչի, առարկայական ծրագրերի և մայրենիի գործող դասագրքերի վերլուծություն.....28

2.2. Տարրական դասարանների ուսուցիչների կարծիքների վերլուծություն..... 21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Ներածություն

Ուսումնասիրության արդիականությունը: Ընթերցանությունը գիտելիքների հարստացման անսպառ աղբյուր է, երեխայի խոսքի և ճանաչողական կարողությունների, ստեղծագործական կարողությունների զարգացման համընդ-հանուր միջոց: Ընթերցողական կարողության ձևավորումը դպրոցական մյուս բոլոր առարկաների հետագա ուսուցման հիմքն է, տեղեկատվության հիմնական աղբյուրը և նույնիսկ հաղորդակցման միջոցը: Լավ ընթերցանությունը երեխայի հաջող ուսուցման գրավականն է: Ժամանակ տրամադրելով կարդալ սովորելուն՝ մենք հզորացնում ենք երեխային, լավ հարթակ ենք ստեղծում դպրոցում հաջող զարգացման և սովորելու համար: Ընթերցողական կարողությունը հաջող ուսուցման բանալի է ինչպես տարրական, այնպես էլ միջին դպրոցում, ինչպես նաև կողմնորոշման հուսալի միջոց է տեղեկատվության հզոր հոսքում, որին պետք է դիմագրավի ժամանակակից մարդը:Մեր ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է ընթերցողական կարողության ձևավորման զարգացման անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրության նպատակը: Տարրական դասարաններում ընթերցողա-կան կարողությունների ձևավորումն ու դրանց արդյունավետության բարձրացման հնարների մշակումն է:

Ուսումնասիրության խնդիրները.

1. Ուսումնասիրել մագիստրոսական թեզի հիմնախնդրին առնչվող մանկա-վարժամեթոդական մասնագիտական գրականություն:

2. Ուսումնասիրել <<Հայոց լեզու>>, <<Գրականություն>> կրթական չափորո-շիչը, առարկայական ծրագիրը և մայրենիի գործող դասագրքերը:

3. Մշակել և փորձարկել կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորմանը նպաստող վարժությունների համակարգ:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 Ընթերցողական կարողության ձևավորման տեսական մոտեցումները

Տարրական դպրոցում մայրենիի ուսումնասիրման գործընթացում լուծվում են հետևյալ հիմնական խնդիրները[1]՝



Գծապատկեր 1

Ինչպես երևում է գծապատկերից առաջին և անհրաժեշտ պայմանը երեխաների՝ դասարանից դասարան կարդալու կարողության ձևավորումն ու զարգացումն է:Դրանից հետո անհրաժեշտ է զարգացնել երեխայի խոսք կառուցելու կարողությունը,այսինքն՝ մաքրել, հոկել և հարստացնել նախադպրոցական տարիքում և գրաճանաչության ողջ ընթացքում երեխաների ձեռք բերած բառա-պաշարը:Մայրենիի դասագործընթացի նպատակներից մեկն էլ հանդիսանում է երեխաների հայեցի դաստիարակության, ինչպես նաև վերլուծական ու

[1] Տե՛ս Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, <<Զանգակ>> հրատ., 2018, էջ 99:

քննադատական մտածողության ձևավորումը,որն իրականացվում է գեղարվես-տական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով;Այդ ամենից հետո երեխայի մոտ պետք է ձևավորվի տարրաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու և պարզ դատողություններ անելու կարողությունը, այսինք՝ դրանց հիմնական միտքը՝ գաղափարը հասկանալու, ենթատեքստը կռահելու, հերոսների գործողությունների տրամաբանությունն ըմբռնելու համար:

Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակները երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը և ընթերցողական կարողության ձևավորումը:

Տարրական դասարաններում կարդալու կարողության ձևավորումը մայրենիի դասի հիմնական նպատակներից է:Ուսուցման այբբենական շրջանում ձևավորվում է երեխաների կարդալու նախնական կարողությունը:Նրանք կարողանում են կարդալ փոքրածավալ բնագրեր, պատասխանել բնագրի վերաբերյալ ուսուցչի տված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը: Այս ամենն աշակերտին նախապատրաստում է բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասին: Բացատրական մեթոդով աշխատելիս ուսուցիչը գիտական տեղեկույթը հաղորդում է աշակերտներին՝ կիրառելով զանազան մեթոդական հնարներ և միջոցներ: Աշակերտներն ընկալման, գիտակցման և մտապահման ճանապարհով յուրացնում են տեղեկույթը: Այս մեթոդը, անշուշտ, ընձեռում է ծավալուն գիտելիքներ հաղորդելու հնարավորություն՝ նվազագույնի հասցնելով ձեռքբերածը կիրառելու կարողությունը:Այսինքն իրականացվում է միայն տեսական նյութի յուրացում:

Կարդալու կարողության մշակման արդյունավետությանը նախնական փուլում հատկապես նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը: Այն ընթերցանությանը

տալիս է զարգացնող բնույթ: Կարդալու հմտության ձեռքբերման բուրգի ընդհանուր աստիճանների մեջ պայմանականորեն առանձնանում է 5 քայլ:

Առաջին երկուսը նպաստում են տեքստի հնչյունաբառային ըմբռնմանը, նրա վերարտադրմանը, ակտիվանում են խոսքի ըմբռնողական մեխանիզմները:

Բառային ընթերցանության աստիճանում էականորեն զարգանում է կարդացած բառի և մտքի կապերի ընկալումը. Զուգորդվում է լսված բառի և նրա իմաստի հասկացությունը: Նախադասություններով կարդալու աստիճանում կարդացածի ընկալման միավորը մեծանում է, կարդալու վերացական-տրամաբանական կողմը հասնում է ավելի բարձր աստիճանի:Կարդացողի վարպետության բարձր մակարդակը պայմանավորված է լայն ընթերցողական դաշտի ձևավորվածությամբ.ընթերցեղն սկսում է արագ տեսնել և կարդալ ընթերցողական էջեր:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեկ տողն ընթերցելիս հմուտ ընթերցողի աչքերը կատարում են 3-6 կանգառ, որոնց ժամանակ տեղի են ունենում կարդացածի գիտակցում՝ հասկացում և ըմբռնում: Անհասկանալի մտքի կամ բառի դեպքում, բնականաբար, ընթերցողի աչքերը կրկնում են շարժումը՝ վերադառնալով ընթերցածին[2]:

Առանձնացնում են կարդալու հմտության ձևավորման 3 փուլ՝

Գծապատկեր 2

[2] Տե՛ս Գյուլամիրյան Ջ. Հ., նշվ. աշխ. էջ 11

I. Վերլուծական փուլում տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը՝ նայած, թե ընթերցողը վանկերով է կարդում, թե տառերով:

II. Համադրական փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը. Ընթերցողը կարդում է ամբողջական բառերով:

III. Ավտոմատացված կարդալու ժամանակ կարդալու միավորը նախադասությունն է.ընթերցողը կարդում է նախադասություններով:

Վերլուծական փուլում կրտսեր դպրոցականը սովորում է ձայնի և տառի հարաբերակցությունը, սովորում է միաձուլել վանկերը, այնուհետև ավելացնել բառեր: Տվյալ ժամանակահատվածում կարդացածի ըմբռնումը տարանջատվում է ժամանակի ընկալման գործընթացից՝ աշակերտը նախ կարդում է բառը և հետո միայն գիտակցում դրա իմաստը: Այս փուլում հատկանշական է «կտրված» ընթերցանությունը, որում բառերն ընթերցվում են առանց ինտոնացիայի՝ միմյանց միացնելով: Այս ժամանակաշրջանի սխալներն են՝ բառերի վերջավորությունների փոխարինումը և բառերի կրկնությունը: Երբեմն ուսանողն ինքը նկատում է իր սխալները և փորձում ուղղել դրանք, հետևաբար նա անցնում է ընթերցանության հմտությունների ձևավորման մեկ այլ փուլ:Համադրական փուլը բնութագրվում է նրանով, որ աշակերտի մտքում բառը որոշվում է ոչ թե պարզապես առանձին մասերի միավորմամբ, այլ գործում է որպես ամբողջություն: Միևնույն ժամանակ, բառի տեսողական ընկալումը համընկնում է դրա իմաստի գիտակցման հետ:Ընթերցանության հմտության ավտոմատացման փուլում բարելավվում և համախմբվում են ձևավորված հմտությունները: Ընթերցանության տեխնիկական կողմը իր տեղը զիջում է ընթերցվածի իմաստը հասկանալու գործընթացին:

Այսպիսով, ընթերցանության ուսուցման գործընթացում ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի նրան, որ օգնի կրտսեր ուսանողներին հնարավորինս արագ հաղթահարել խնդիրները վերլուծական փուլում և զարգացնել հետաքրքրություն կարդալու նկատմամբ՝ ձևավորելով ավտոմատ ընթերցման հմտություն:

1.2 Կարդալու որակական հատկանիշներն ու դրանց դերը ընթերցողական կարողության ձևավորման հարցում

Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկայում մշտապես դիտարկվել է բացատրական ընթերցանության մեթոդի հինգ բաղադրամաս[3]:



Գծապատկեր 3

Ընթերցողական կարողության ձևավորման գերխնդիրը դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է:Լավ կարդալու որակներն են՝

Գծապատկեր 4

[3] Տե՛ս Գյուլամիրյան Ջ., նշվ. աշխ. էջ 103:

1. Ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով՝ հասկանում ենք բնագրի ՝ բարձրաձայն, պարզ ու հստակ ընթերցումը, երբ աշակերտը բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բառի մեջ չի փոխում առանձին տառերի ու վանկերի տեղերը, դրանք չի շփոթում ուրիշ վանկերի ու տառերի հետ, երբ փոփոխության չի ենթարկում բառի քերականական ձևը, երբ բառերն արտասանում է գրական հայերենի արտասանության չափանիշներին համապատասխան՝ պահպանելով հայերենի ուղղախոսության կանոնները[4]:
2. Հասկանալով կամ գիտակցորեն կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել՝ պահպանելով ստեղծագործության մեջ ներկայացված մտքերի, դեպքերի հաջորդականությունը, տրամաբանական և պատճառահետևանքային կապերը:Աշակերտներին հասկանալով կարդալ սովորեցնելու համար գործածվում են բազմաթիվ հնարներ:Մասնավորապես արդյունավետ է հատված առ հատված կարդալը(կանգառներով կարդալը) և զույգերով մեկնաբանելը(իրար կողքի նստած), կարդացածի բովանդակության շուրջ զրուցելը, ի-րար պատմելն ու դատողություններ անելը և այլն:
3. Վարժ կամ սահուն կարդալ ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց անհարկի դադարների, անհրաժեշտ չափով ա-րագ ու սահուն ընթերցումը:



Գծապատկեր 5

[4] Տե՛ս Գյուլամիրյան Ջ. Հ., նշվ. աշխ. էջ 113:

Տարրական դպրոցում կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցելու կարողության զարգացումն ու ձևավորումն իրականացվում են նյութի բազմակի ընթերցանության ճանապարհով՝ կիրառելով բազմաբնույթ նպատակներ և կազմակերպման ինքնատիպ ձևեր ունեցող կարդալու տեսակներ:Դրանք ոչ միայն նպաստում են կարդալու որակական հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը, այլև մշակում են ընթերցողական կարողություններ, միևնույն ստեղծագործության բազմակի ընթերցման գործընթացը դարձնում են հետաքրքրական և անձանձիր:Հետևաբար մայրենիի դասերի ժամանակ պիտի կիրառել կարդալու բոլոր տեսակներն էլ՝ անշուշտ հաշվի առնելով ստեղծագործության առանձնահատկությունները:Մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի դասարանական ընթերցումը կարելի է իրականացնել մի քանի ձևով՝ ձայնով կամ բարձրաձայն, լուռ կամ մտքում, շարունակելով, մեկնաբանելով կամ կանգառներով, ընտրովի և դերերով:Սրանցից յուրաքանչյուրն ունի իրականացման որոշակի մեթոդիկա:

Գծապատկեր 6

Տարրական դասարաններում ընդունված է ձայնով կարդալը, քանի որ այսպիսի ընթերցումը նպաստում է կարդալու կարողության մշակմանն ու կատարելագործմանը: Ձայնով կարդալը լինում է երկու տեսակ՝ բարձրաձայն և ցածրաձայն: Բարձրաձայն ընթերցանությանը տարրական դպրոցում մեծ տեղ է տրվում այն բանի համար, որ այդ ձևով կարդալիս ընթերցանության գործընթացին մասնակցում են երեխաների ոչ միայն աչքերն ու արտասանական կառույցը, այլև ականջները. որքան շատ զգայարան մասնակցի ուսուցման գործընթացին, այնքան այդ գործընթացն արդյունավետ կլինի: Լուռ կարդալը մտքում կարդալն է, որն իրականացվում է դասարանում՝ ուսուցչի հսկողության ներքո (աչքերի շարժումով՝ առանց խոսքի օրգանների մասնակցության): Բայց տարրական դասարաններում միշտ չէ, որ խրախուսվում է մտքում կարդալը:[5]

Շարունակելով կարդալ: Կարդալու այս տեսակը շատ արդյունավետ է տարրական դասարաններում:Երբ ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը կարդում է, ամբողջ դասարանը աչքերով հետևում է ընկերոջ ընթերցանությանը՝ պատրաստ շարունակելու այն հատվածից, ուր կընդհատի ընթերցողը ուսուցչի պահանջով:Կարդալու այս տեսակի միջոցով միանգամից կարդում է ամբողջ դասարանը:Շարունակելով կարդալուն պետք է հաջորդի կանգառներով ընթերցանությունը, որի ժամանակ ընթերցած նյութը հատված առ հատված մեկնաբանվում է:Այդ պատճառով կարդալու այդ տեսակը կոչվում է նաև մեկնաբանելով ընթերցանություն:

Բացատրելով կամ մեկնաբանելով կարդալն իրագործվում է կարդացած նյութի բովանդակությունը կամ մտքերը բացատրելով ու մեկնաբանելով, քննարկելով գործող անձանց վարքը, արդարացնելով կամ մեղադրելով նրանց, բառային աշխատանք կատարելով, բառերի ուղղագրությունը բացատրելով, կետադրությունը մեկնաբանելով և այլն:Մեկնաբանելով կամ կանգառներով ընթերցանությունը մեծապես նպաստում է բնագրի բովանդակության մեջ թափանցելուն, գործող անձանց և կերպարների էությունն ըմբռնելուն, ներկայացվող դեպքերի տրամաբանական և պատճառահետևան-

[5] Տե՛ս Գյուլամիրյան Ջ., նշվ. աշխ. էջ 120:

քային կապերը հասկանալուն, գաղափարն ու ենթատեքստը բացահայտելուն և մեկ-նաբանելուն:Սրանք ընթերցողական կարողության հիմնական բնութագրիչներն են: Կարդալու բոլոր տեսակներն էլ նպաստում են ընթերցողական կարողության ձևավորմանն ու զարգացմանը, սակայն կանգառնեռրով ընթերցանությունն այդ խնդրում առավել ընդարձակ հնարավորություններ ունի:

Տարրական դպրոցում հանձնարարվող կարդալու մեկ ուրիշ ձև է ընտրովի ընթերցա-նությունը, որի ժամանակ աշակերտն ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն գործող անձի խոսքերը , որևէ հատվածը կամ միտքը, դուր եկած տողերը և այլն՝ դրանով իսկ ընդգծելով այդ անձանց բնավորության գծերը, հեղինակի կամ ընթերցողի համար կարևոր գաղափարները:Սա նպաստում է աշակերտների՝ կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցելու կարողության կատարելագործմանը և լուռ կարդալու ունակության ձևավորմանը:Ընտրովի ընթերցանությունը մասնավորապես նպաստում է վերլուծական-համադրական. այսինքն՝ քննադատական մտածողության զարգացմանը:Ընտրովի ընթերցանությունը պետք է նախորդի դերերով ընթերցանությանը, որովհետև ընտրովի ընթերցանության ժամանակ երեխաները ծանոթանում են ստեղծագործության հերոսների հետ, հասկանում են նրանց արարքների դրդապատճառները, իմաստավորում և յուրացնում են նրանց խոսքերը, որոշում և մտապահում յուրաքանչյուր հերոսի խոսքի տեղը բնագրում, և դերերով ընթերցելիս նրանք չեն շփոթվում,դերը <<կատարում են>> հասկանալով[6]:

Տարրական դասարաններում արտահայտիչ կարդալու կարողության մշակման գործում հատկապես մեծ է դերերով կարդալու նշանակությունը: Ամենավատ կարդացողն անգամ դերերով կարդալիս լավ է ընթերցում, որովհետև նա ձգտում է ճիշտ արտահայտելու գործող անձի հոգեվիճակը: Դերերով պետք է կարդալ տալ

[6] Տե՛ս Գյուլամիրյան Ջ., նշվ. աշխ. էջ 123:

գործող անձերով հարուստ բնագրեր, որպեսզի որքան հնարավոր է շատ աշակերտներ մասնակցեն ընթերցանությանը:

Կարդալու կարողության ձևավորման խնդրում կարևոր է այն, թե ով է առաջինը կարդում դասի համար նախատեսված ստեղծագործությունը՝ ուսուցի՞չը, թե՞ աշակերտը, և ինչպե՞ս պետք է այն կարդալ՝ մաս-մաս, թե՞ ամբողջությամբ: Գործնական բնույթի նյութերի (պատմական, բնագիտական, աշխարհագրական) ուսուցումը պետք է տարվի մասից դեպի ընդհանուրը գնացող հաջորդականությամբ, քանի որ դրանցում պարունակվող աշխարհաճանաչողական գիտելիքների մասով ուսուցումը ավելի դյուրընկալ է:

Տարրական դասարաններում մայրենիի դասերի ժամանակ կիրառվում է նույն նյութի բազմակի ընթերցումը, որի դեպքում շատ երեխաներ են ընթերցում, մասնակցում դասին:Անառարկելի պահանջ է. մայրենիի դասին 15-20 րոպե երեխաները պիտի կարդան:Սակայն միևնույն նյութի անընդհատ ու միատեսակ ընթերցումը ձանձրացնում է երեխաներին, նրանց մեջ մարում է ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը:Կանխելու համար այդ երևույթը պետք է ստեղծագործության ընթերցումը կազմակերպել՝ կիրառելով կարդալու բոլոր տեսակները՝ շարունակելով, կանգառներով,(մեկնաբանելով), ընտրովի, դերերով:

1.3 Տարրական դասարանների աշակերտների ընթերցողական կարողության ձևավորման առանձնահատկությունները.

Կարդալու հմտությունը բարդ հոգեֆիզիոլոգիական գործընթացներից է: Այն միահյուսում է մտավոր և խոսքի գործունեության հետ կապված տարրերն ու հատկությունները: Ընթերցանության գործընթացը ներառում է ընթերցողի անձնական որակները, նրա զգացմունքները, ընկալումը, ուշադրությունը, երևակայությունը, կարողությունները, հետաքրքրությունները, արժեքները: Շրջապատող աշխարհի մասին կուտակված գիտելիքները զարգանում են: Ակտիվանում է այն բառապաշարը, որին տիրապետում է ընթերցողը, որը կուտակել է առօրյա խոսքի գործընթացում : Կրտսեր դպրոցականների մոտ ընթերցանության հմտությունների ձևավորումն ունի հետևյալ հատկանիշները.

- ✓ Ընթերցողի ընթերցանության դաշտը ընդգրկում է միայն մեկ տառ՝ այն «սահմանելու» համար, հաճախ նա այն համեմատում է մյուսների հետ. Կարդալը ընթերցողի մեջ արթնացնում է ձայնն անմիջապես արտասանելու բնական ցանկություն, բայց ուսուցիչը խնդրում է արտասանել մի ամբողջ վանկ, ինչը նշանակում է, որ նա պետք է կարդա գոնե ևս մեկ տառ՝ հիշողության մեջ պահելով նախորդը, պետք է երկուսը միաձուլի: կամ երեք հնչյուն՝ վանկի մեջ: Այստեղ շատ աշակերտներ մեծ դժվարություններ են ապրում: Ի վերջո, ամբողջ բառը կարդալու համար բավական չէ վերարտադրել միայն այն կազմող հնչյունները: Ընթերցանության գործընթացը դանդաղ է ընթանում, քանի որ բառը կարդալու համար անհրաժեշտ է կատարել բառի տառերին համապատասխան ընկալման և ճանաչման մի քանի գործողություններ, և բացի այդ, դեռ պետք է հնչյունները միավորել վանկերի, իսկ վանկերը՝ բառերի: Սկսնակ ընթերցողի աչքերը կորցնում են գիծը, քանի որ նա պետք է հետ գնա, վերընթերցի տառերը, վանկերը: Նրա հայացքը դեռ սովոր չէ գծերին զուգահեռ շարժվել: Այս խնդիրն աստիճանաբար անհետանում է, քանի որ աշակերտի

ուշադրության շրջանակն ընդլայնվում է, և նա միանգամից ընկալում է մի ամբողջ վանկ կամ մի ամբողջ բառ;

Կրտսեր դպրոցականի կողմից կարդացվող տեքստի ընկալումը տարբերվում է

Հայտնի է, որ տարրական կրթության ընթացքում կրտսեր դպրոցականը անցնում է խոսքային-տրամաբանական մտածողության, մինչդեռ այս տարիքում գերակշռում է տեսողական-փոխաբերական մտածողությունը։Աշակերտի համար դժվար է պատճառահետևանքային կապեր հաստատել, դա պայմանավորված է այս տեսակի մտածողության յուրահատկությամբ։ Տարրական դպրոցում իմաստային հիշողությունը սկսում է ակտիվորեն ձևավորվել՝ պահանջելով աշխատանք՝ ուղղված տեքստը հասկանալուն և մտածելուն։

Տարրական դպրոցի ծրագիրը նախատեսում է փուլ առ փուլ ուսուցում դասարանից դաս, և յուրաքանչյուր փուլում ընթերցանության հմտությունների ձևավորումը գնահատվում է ըստ այնպիսի չափանիշների և ցուցանիշների, ինչպիսիք են՝ կարդացածի ծավալը, ճշտությունը, տեղեկացվածությունը, արտահայտչականությունը։

Ներկայումս դպրոցականները քիչ են կարդում և առանց ցանկության։ Դա տեղի է ունենում որոշակի պատճառներով, ինչպիսիք են՝ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության պակասը, համացանցի հայտնվելը, գաջեթները և այլն։Ընթերցանության ուսուցման ժամանակակից մեթոդը սահմանում է ընթերցանության հմտությունը որպես ընթեռնելի ստեղծագործությունը բարձրաձայնելու, ընկալվող տեքստի մտադրությունը հասկանալու և կարդացածի հետ անձնական հարաբերություններ ձևավորելու ավտոմատացված հմտություն։ Միևնույն ժամանակ, ընթերցանության նման գործունեությունը հնարավորություն է տալիս տրամաբանելու տեքստը կարդալուց առաջ, ընթերցման ընթացքում և հետո։ Միայն այդպիսի «գիտակցված ընթերցանությունը» միջոց է աշակերտին ծանոթացնելու ընթերցանությանը, անձնական զարգացմանը և ընկղմվելու գրքի հրաշալի աշխարհում։

ԳԼՈՒԽ 2. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

2.1 <<Հայոց լեզու>>, <<Գրականություն>> կրթական չափորոշչի, առարկայական ծրագրերի և մայրենիի գործող դասագրքերի վերլուծություն

Ընթերցանությունը տարրական դասարանների ուսումնական ծրագրի բաժիններից է:Ընթերցանության դասի խնդիրն է ինտենսիվ կերպով զարգացնել ընթերցանության հմտությունը որպես խոսքի գործունեության տեսակ:Սահուն ընթերցանության ձևավորմանը զուգահեռ աշակերտները ուսումնառության բոլոր տարիներին տիրապետում են գիտակցված ընթերցանության տեխնիկային, ըմբռնում են իրենց կարդացածի իմաստը, ընդհանրացնում և կարևորում են հիմնականը՝ լուծելով հաղորդակցման տարբեր խնդիրներ:Խոսքի արտահայտչականության և ընթերցանության տեխնիկայի ուսուցումը տեղի է ունենում դասերի ընթացքում:Հենց առաջին դասարանում տեղի է ունենում կարդալու որակական հատկանիշների մշակում և ձայնի կառավարում, կարողանում են կազմակերպել երկխոսություններ և զրույցներ տեքստի շուրջ, տեքստի սեփական ընկալումը համադրում են գրքի նկարազարդման հետ, գրաճանաչության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու կարողություններն ամրապնդվում ու զարգանում են, կարդալու տեմպը համապատասխանեցնում են խոսելու տեմպին, տեքստը կարողանում են կարդալ առանց բառի հնչյունային կազմի աղավաղման՝ պահպանելով հայերենի շեշտադրության և ուղղախոսության կանոնները:

Առաջին դասարանում աշակերտներն իրենց համար հետաքրքիր և մատչելի ստեղծագործություններում խաղային ձևով բացահայտում են գեղարվեստական տեքստի ենթատեքստը, ծանոթանում գրականագիտական հասկացություններին՝ հեղինակ, գեղարվեստական տեքստ, բանաստեղծություն, հանգ, ռիթմ, ժողովրդական բանավոր ստեղծագործություն :

2-րդ դասարանում սովորողները պետք է կարողանան գիտակցաբար, ճիշտ և արտահայտիչ ու ամբողջական բառերով կարդան՝ պահպանելով համապատասխան ինտոնացիան, տոնայնությունը, տեմպը, պետք է կարողանան ձայնի բարձրությունը համապատասխանեցնել հաղորդակցական խնդիրներին և խոսքային իրավիճակին, կարողանան կառավարել խոսքի և ընթերցանության տեմպը՝ այն համապատասխանեցնելով տեքստի բովանդակությանը, պահպանեն տեքստի վերարտադրման հնչերանգը (տեմպ, դադար, կարդալու տոն) ,կարդան և անհրաժեշտության դեպքում ուղղեն սխալները:Նրանք նաև սովորում են հասկանալ վերնագրի թաքնված իմաստը:

3-րդ դասարանում սովորողը պետք է կարողանա անսխալ և ճիշտ առոգանությամբ տեքստը կարդա լուռ և բարձրաձայն, ամբողջական, շարունակելով կամ ընտրովի սկզբունքով: Լուռ ընթերցանության ընթացքում պետք է կարողանա դժվար և իմաստով անծանոթ բառերն առանձնացնի, ինչպես նաև կարողանա սահմանել կարդալու նպատակը և նախապես ուսումնասիրի ընտրված նյութը:

4-րդ դասարանում կատարելագործվում է ընթերցանության տեխնիկան:Երեխաները սովորում են վերնագրերով կանխատեսել տեքստի բովանդակությունը, ընթերցանու-թյան գործընթացում վարում են երկխոսություն հեղինակի հետ, ձևակերպում են հիմ-նական միտքը, այն կապում տեքստի մտքի հետ, ավելի է կատարելագործվում բարձրաձայն կարդալու արագությունը, ինքնուրույն նախապատրաստվում են ար-տահայտիչ կարդալուն, կարողանում են վերլուծել իրենց ընթերցած նյութը, ինչպես նաև կարողանում են գրական ստեղծագործությունները համապատասխան երանգներով արտասանել:

Դասագրքերում ընդգրկված ստեղծագործությունների ընտրության կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք համապատասխանում են կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկություններին: Այս առումով կարևոր է, որ դասագրքերը հնարավորություն են տալիս անդրադառնալ բանավոր ժողովրդական ստեղծագործություններին, հատկապես հեքիաթներին :

Հենց հեքիաթներն են իրենց սյուժեում (բարու և չարի պայքար) և իրենց գաղափարով (բարու հաղթանակ), տալիս լայն նյութ երեխաների համար հասկանալի և մատչելի ձևով այնպիսի հատկանիշների ձևավորման համար, ինչպիսիք են ՝ աշխատասիրությունը, բարությունը, քաջությունը, հաստատակամությունը և պատասխանատվությունը, կարեկցելու ունակությունը, մյուսին օգնելու պատրաստակամությունը։ Ընթերցելով և մտածելով դասագրքերում ընդգրկված ստեղծագործությունների բովանդակության մասին ՝ երեխաները սկսում են սկզբնական պատկերացումներ ունենալ այնպիսի բարոյական հասկացությունների մասին, ինչպիսիք են պարտքը, փոխօգնությունը, կարեկցանքը, հոգատարությունը։Ուսուցչի խնդիրն է այնպես կազմակերպել աշխատանքը տեքստի վրա, որպեսզի ստեղծագործությունների հերոսներին կարեկցելով, բանա-ստեղծություններ կարդալով ՝ երեխաները գեղարվեստական տեքստի ուժեղ հուզական ազդեցություն ունենան.հուզվեն, ուրախանան ու վշտանան՝ արժանանալով ստեղծագործությունների բարոյական դասերին։Աշակերտը պետք է կարողանա լսել ընթերցված նյութը, հասկանա, իսկ այնուհետև ճիշտ վերարտադրի հնչող խոսքը, բարձրաձայն կամ լուռ ընթերցի տեքստը՝ ուշադրություն դարձնելով առանձին բառակապակցությունների և բառախմբերի իմաստների վրա, սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցի տեքստը՝ (առանց տեմպի հաշվառման), լուռ ընթերցի՝ կենտրոնանալով իմաստով անծանոթ բառերի վրա և տեղեկատվական աղբյուրներից ինքնուրույն գտնի դրանց բացատրությունը։

2. 2. Տարրական դասարանների ուսուցիչների կարծիքների վերլուծություն

Մեր նպատակն է հարցման միջոցով պարզել, թե ի՛նչ դժվարություններ են առաջանում ընթերցողական կարողության ձևավորման ընթացքում և ի՛նչ մեթոդներ եք կիրառում կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության մակարդակը բարձրացնելու համար:



1. «Որ մեթոդներն են առավել արդյունավետ կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման համար» հարցին ուսուցիչների մեծամասնությունը պատասխանել են խոսքայինն ու զննականը, իսկ 1 ուսուցիչ պատասխանել է տրված բոլոր մեթոդները:Մեր կարծիքով նշված երեք մեթոդներն էլ նպաստում են, սակայն առավելապես նպաստում է զննական մեթոդը, քանի որ որքան շատ զգայարան է մասնակցում այնքան ընկալումը ավելի հեշտ ու դյուրին է

3 իրականացվում:Նշենք, որ ուսուցիչներին տվել էինք ընտրության մի քանի հնարավորություն

4



1.«Նախաայբբենական շրջանում բառերի կամ բառ-նկարների հնչյունատառային վերլուծությանը ինչքանով եք անդրադառնում» հարցին ուսուցիչների 65.5%-ը պատասխանել է, որ մեծ ուշադրություն է դարձնում, 20.7%-ը պատասխանել է, որ շատ է անդրադառնում, 10.3%-ը նշել է, որ մասամբ է անդրադառնում, իսկ 3.5%-ը նշել է, որ քիչ է անդրադառնում:Իմ կարծիքով նախայբբենական շրջանում բառերի կամ բառ-նկարների հնչյունատառային վերլուծությանը պետք է շատ անդրադառնալ:Նա-խաայբբենական շրջանում մինչև տառուսուցումը պետք է կատարել 90%-անոց վերլուծություն, որպեսզի այբբենական շրջանում երեխան կարողանա համադրել տառերը:Ուստի նախաայբբենական շրջանում բառ-նկարների վերլուծությանն անդրադառնալը նպաստում է հետագայում երեխայի կարդալու կարողության ձևավորման հարցում:

29 responses



2.«Համադրությանը որքանո՞վ է անդրադառնում ձեր վերլուծությունը այբբենական շրջանում բառերի ընթերցման ժամանակ» հարցին ուսուցիչների 69%-ը պատասխանել է, որ շատ է անդրադառնում, 20.7%-ը՝ մասամբ է անդրադառնում, 10.3%-ը նշել է, որ քիչ է անդրադառնում:Իմ կարծիքով նախաայբբենական շրջանում իրականացրած վերլուծությունը շատ է անդրադառնում համադրության վրա, քանի որ երեխան տեսանելով տառերը միանգամից համադրում է ու ասում բառը:Օրինակ ս, ա, ր – երեխան կարդում է միանգամից սար: Ուստի նախաայբբենական շրջանում բառ-նկարների վերլուծությանն անդրադառնալը նպաստում է այբբենական շրջանում բառերի համադրությանը, որը հետագայում ազդում է երեխայի կարդալու կարո-ղության ձևավորման վրա:



3. «Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը առավելապես նպաստում է» հարցին ուսուցիչների մեծամասնությունը պատասխանել են բարձրաձայն ընթերցանությունը, ինչպես նաև որպես շատ պատասխան ունեցող տարբերակ կարող ենք առանձնացնել դերերով ընթերցանությունը և բնագրի շուրջ աշխատանքը:Իմ կարծիքով կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը առավելապես նպաստում են բոլոր վերը թվարկվածները բացի արագ ընթերցանությունից, քանի որ արագ ընթերցանությունը ձևավորվում է այն ժամանակ երբ պահպանվում են կարդալու որակական հատկանիշները:

29 responses



4.«Ինչպիսի՞ խնդիրներ են առաջանում կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման ընթացքում» հարցին ուսուցիչների 44.8%-ը պատասխանել է, որ աշակերտները աղավաղում են կարդացած բառերի վերջավորությունները, 27.6%-ը նշել են, որ աշակերտները դժվարությամբ են համադրում վանկերը, 24.1%-ը՝ ամբողջապես չեն ընկալում բառերի իմաստը, իսկ 3.5%-ը նշել են բոլոր նշվածները: Իմ կարծիքով բառը կարդալու համար անհրաժեշտ է կատարել բառի տառերին համապատասխան ընկալման և ճանաչման մի քանի գործողություններ, և բացի այդ, դեռ պետք է հնչյունները միավորել վանկերի, իսկ վանկերը՝ բառերի: Սկսնակ ընթերցողի աչքերը կորցնում են գիծը, քանի որ նա պետք է հետ գնա, վերընթերցի տառերը, վանկերը: Նրա հայացքը դեռ սովոր չէ գծերին զուգահեռ շարժվել: Այս խնդիրն աստիճանաբար անհետանում է, քանի որ աշակերտի ուշադրության շրջանակն ընդլայնվում է, և նա միանգամից ընկալում է մի ամբողջ վանկ կամ մի ամբողջ բառ:

Դրա համար էլ սկզբնական շրջանում տեղի են ունենում բառերի վերջավորության աղավաղումներ:

29 responses

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարրական դպրոցի հիմնական խնդիրն է զարգացնել սահուն, գիտակից, ճիշտ և արտահայտիչ ընթերցանության ուժեղ հմտությունը, որը հիմնված է ընթերցանության նկատմամբ հետաքրքրության առաջացման և զարգացման վրա:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Մասնագիտական գրականության մեջ ընթերցողական կարողության ձևաավորմանը նվիրված մի շարք նյութեր և հոդվածներ կան, սակայն տարրական դասարաններում, կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման մեթոդիկային առնչվող նյութ շատ քիչ կա:
2. Տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունները կարող են նպաստել կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորմանը, տեքստերը և բնագրերը նպատակային են ընտրված:
3. Աշակերտների ընթերցողական կարողության ձևավորման ուղղությամբ աշխատանքները պետք է սկսել 1-ին դասարանից և շարունակել մինչև տարրական դպրոցի ավարտը:
4. Ուսուցիչների շրջանում իրականացված հարցախույզը մեզ թույլ է տալիս ասել, որ ուսուցիչները կարևորում են ընթերցողական կարողության զարգացումը և ժամանակակից մեթոդներով իրականացնում են աշխատանքներ այդ ուղղությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայոց լեզու, գրականություն» առարկայական ծրագիր, 2011թ.:
2. «Հայոց լեզու, գրականություն» կրթական չափորոշիչ 2011թ.:
3. https://externat.foxford.ru/polezno-znat/kak-effektivno-zapominat-teksty-v-klasse-metodika-rivina (հասանելի էր 18.04.2023թ.)
4. https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Mankavarjutyun/2008%281-2%29.pdf (հասանելի էր 25.04.2023թ.)
5. Ավագիմյան Ա., Գիտական գրավոր խոսք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2021:
6. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., Երևան, 2018, 344 էջ:
7. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան 2020:
8. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4, «Մանմար» հրատ., Երևան, 2019:
9. Սարգսյան Վ., Մայրենի 1, «Մանմար» հրատ., Երևան, 2019:
10. Սարգսյան Վ., Այբբենարան, «Մանմար» հրատ., Երևան, 2020:
11. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., Մայրենի 2, «Մանմար» հրատ., Երևան, 2020:
12. Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Թորոսյան Կ., Ջիլավյան Ե., Մայրենի 3, «Մանմար» հրատ., Երևան, 2020:
13. Տեր-Գրիգորյան Ա, Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Երևան, 1980, 564 էջ:
14. Քչուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան 2020: